

– Դեռ նախատե՞լ զիս կը համարձակիս, անա՛րգ շինական,– ըսաւ Թումայ եւ  
ելաւ սուրն առնելու:

– Յանդարտ տեղդ նստէ, հոռոմ իշխան,– ըսաւ Չաւեն ծանր եւ արհամարհոտ  
ձայնով եւ ամենափոքր շարժումնք նաեւ չընելով.– Ես երբ հոռոմ իշխան կ'ըսեմ,  
պետք է իմանաս թէ իմ մտքիս մէջ այդ քու անարգ շինականներեդ աւելի  
անարգ քան մը կ'իմանամ, քու այդ սուրեդ վախցող մարդ չի կայ այստեղ, Ես  
գրաւի կ'ուզամ, որ այդ խեղճ սուրը պատեանեն անգամ ելած չէ տարիներէ ի  
վեր եւ ժանգոտած է: Իսկ եթէ այս խեղճ շինականի սուրը պատ եանեն ելնէ  
յանկարծ՝ Լուսաւորի՛չ վկայ, որ առանց քանի մը հոգի հանելու տեղը չի  
դառնար:

Այն անշարժութիւնն, այն հանդարտ ձայնը, այն արհամարհոտ կերպը, որ  
Չաւենի վրայ նկատեց յոյն զօրավարը, բաւական եղան, որ կերպը փոխէ եւ  
ինքզինքը սանձէի ուստի կիրքը թողուց եւ արհամարհանաց ձեւ մը առնելով  
նստաւ:

– Յա՛, այդպէս խելօք նստիկ եւ մարդու պէս տեսնուիկ, դուք մեր հիւրն էք,  
մեր հայրենական սովորութիւնն է հիւրը պատուել, բայց հիւրը եթէ  
աւագակութիւն ընէ՝ դեռ այն ժամանակներում չհասանք բոլորովին, որ  
անպատիւ թողունք, ուստի հիմա քեզ կ'իմացնեմ բարեկամաբար, որ եթէ այս  
վայրկենես փոքրիկ բռնութիւն մը լինի աւանիս մէջ, բոլոր յոյները ջարդել  
կ'ուտամ, եւ որպէսզի մեղք ինձ չի համարուի՝ ահա քու առջեւդ կը հրամայեմ.–  
Տէր Յայր,– ըսաւ աւագերեցին, որ իւր քով նստած էր,– գնա շուտով եկեղեցին,  
ամեն տեղ իմաց տուր, որ զէն բերնին պատրաստ կենան, եւ առաջին  
անիրաւութեան եկեղեցիներն իմաց տան եւ եկեղեցուոյ մը կոչնակները  
զարնուած վայրկենեն ամեն ոք իրաւունք ունենա գտած յոյնը սպաննելու ՏԷ՛,  
իմացա՛ր, գնա՛:

Քահանան թեւատարած ոտք ելաւ երթալու, երբ Թումայ, որ նստեր մտիկ  
կ'ըներ, ձայնը եւ կերպը փոխելով մէկէն քաղցրութեամբ ըսաւ քահանային.

– Դու, որ Զրիստոսի եւ աւետարանի աշակերտ ես կրնա՞ս այսպիսի անգութ  
պատուէր մը քարոզել:

– Աւագակներու պաշտպանութիւն ո՞ւր քարոզեց Զրիստոս, հոռոմ իշխան,–  
պատասխանեց Չաւեն: Ես, թագաւոր եալ քաղաքը՝ Կարին, Տրապզոն  
կախաղաններ տեսայ եւ աւագակներ կախուած, ձեր հոռոմի Զրիստոսը